ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, հեռ. /0263/ 4-19-82
Էլ.փոստ: tavush@mta.gov.am, ***Կայք*** *http://tavush.mtad.am*

„20" „08" 2025թ. N 5-01/43-2025

ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Սևանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի միջև 02.04.2025թ. կնքված թիվ ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-11 ծածկագրով պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ ինչպես նաև 28.07.2025թ.կնքված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի շրջանակներում 37-րդ չափաբաժնի /4 հատ գազօջախի սալիկներ/ մատակարարումից Ձեր կողմից հրաժարումը՝ համաձայն ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ ՍԵՎ ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ի կողմից 14.08.2025թ.ներկայացված գրության, հանգեցնում է Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագրի մասնակի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11 կետը՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի միջև 02.04.2025թ. կնքված թիվ ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-11 ծածկագրով պայմանագիրը՝ 37-րդ չափաբաժնի մասով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր կողմից 14.08.2025թ.գրությամբ ներկայացված Պայմանագրի ու որակավորման ապահովումների վճարումների անդորրագրերի պատճենները պետք է ներկայացվեն ընթացիկով:

Հարգանքով՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ֆինանսական վարչություն
Հեռ.0263-4-45-61